

պէտք է յայտարարուեն տեղական լեզուներով։  
2) Գառարանում գանդպատաստըներին թոյլատըւում է խօսել  
իրենց մայրենի լեզուով։

3) Գառարանների գծիոները պէտք է յայտարարուեն տաճկաց  
լեզուով, բայց միաժամանակ անելով հայերէն թարգմանութիւնը։

4) Հայերին իրաւունք է տրում նոր ուսումնարանների  
բացման համար միջոցներ փնտոելու նպատակով նոր հարկեր  
սահմանել իրենց վրայ։

5) Դասաւութիւնը հայոց պարոցներում լինում է մայրենի  
լեզուով։

6) Հայաստանի բոլոր բնակչութիւնը զինուորական ծառա-  
յութիւնը կատարում է հայրենի երկրում։

7) Տեղական քրդական զօրքերը (համիզիէ) վեր են ածւում  
պահեստի հեծելազօր բանակի։

Բոլոր զինուորները յանձնում են զէնքը զինարանում պա-  
հելու և կարող են նորա ստանալ միմիայն զօրախաղերի և զօրա-  
հուազների գէպիում։ Այդ զինուորների իրական ծառայութեան  
ժամանակաշրջանը որոշուած է մի տարի, ըստ որում հայերին  
տրում է իրաւունք մտնել այդ զօրքերի մէջ իրրե կամաւորներ։

Հայաստանի բարենորոգութիւնների ծրագիրը կը հրատա-  
րակուի իրու շրջարերական յայտագիր, որով Տաճկաստանը կը  
դիմէ բոլոր մեծ պետութիւններին։

Հայաստանում բարենորոգութիւններ մտցնելու հարցի առի-  
թով ուսւ դիւանագիտութեան հասած հետևանքները ունին մեծ  
նշանակութիւն, որովհետեւ նորա ամրապնդում են Փոքր Ասիայի  
հողային ամբողջութիւնը։

ԹԻՒՐԳԱՀԱՅԵՐԻ ԹԻՒԼ ԸՍՏ ԶԱՆԱԶԱՆ ՎԻՃԱԿԱ-  
ԳՐՈՒԹԵԱՆՑ (1).

Հայաստանում բարենորոգութեան մտցնելու խնդրի հետ պար-  
բերական մամուլում առաջ եկաւ և այն հարցը՝ թէ ո՞րքան հայեր  
կան Տաճկահայաստանում։ Տաճկի կառավարութիւնը շատ քիչ  
հասկացողութիւն ունի առհասարակ իւր հպատակների ճիշտ վի-  
ճակագրութեան մասին, եղածն էլ անստոյդ և քմահանոյքի են-

1) Քաղում ենք տեղեկութիւնները «Արօրի» 1915 թ. դեկտեմբեր  
համարից, Մուրճ 1906 թ. № 10. և Վեհափառ Հայրապետի Գիւանից։

թարկած, ուստի և տաճկահայերի թուր մասին մօտաւորապէս գաղափար ունենալու համար պէտք է զիմենք մասնաւոր զիտակ անձանց կազմած վիճակագրութեան:

## Ա.

Ֆրանսիացի գրող և ուղեոր Մ. Ռեֆիշինը իր «Lettres sur la Turquie» աշխատութեան երկրորդ հատորի մէջ 1854 թ. հայերի թուր մասին ամբողջ երկրագնդի վրայ առաջ է բերում հետեւալ վիճակագրութիւնը:

1. Օսմանիան կայսրութիւն . . . . .	2,400,000
2. Ռուսաստան . . . . .	900,000
3. Պարսկաստան . . . . .	600,000
4. Հնդկաստան և Ասիայի երկրները . . . . .	40,000
5. Եւրոպայի երկրները . . . . .	60,000
<b>Գումար</b> . . . . .	<b>4,000,000</b>

Ուրուչինին նշանակելով հայերի թիւր թիւրքիայում 2,400,000, այդ թուրից 400,000 հաշուում է եւրոպական, իսկ 2,000,000 Ասիական թիւրքիայում, որի մէջ այդ ժամանակ մտնում էին նաև Կարսի, Արտահանի և Բաթումի շրջանները: Իսկ հայ կաթոլիկների թիւր Ուրուչինին հաշուում է 38—40,000 ամբողջ Օսմանիան կայսրութեան մէջ, որից 17,000 կ. Պօլսում, 9,000 Անգորայում, 4,000 Երզրումում, 2,500 Տրապիզոնում, 1,500 Արտվինում և 1,000 Բրուսայում:

Եւրոպայի ենգելհարդը իր «Թուրքիան և Թանգիմաթը» զրքի մէջ հայ կաթոլիկների թիւր որոշում է 150,000, իսկ 20,000 էլ հաշուում է հայ բողոքականների թիւր:

## Բ.

1878 թ. Բերլինի վիճաժողովին Հայկական պատգամաւորութիւնը ներկայացրել է ներսէս պատրիարքի կազմի տուած հետեւալ վիճակագրութիւնը:

## 1 Հայաբնակ 6 վիլայեթներում.

1. Վանի վիլայեթ . . . . .	400,000
2. Բիթլիսի . . . . .	250,000
3. Դիարբեքիրի . . . . .	150,000
4. Երզրումի . . . . .	280,000
5. Խարբերդ . . . . .	270,000
6. Սըվազ կամ Սեբաստիայի . . . . .	280,000
<b>Գումար</b>	<b>1,630,000</b>

III Կիլիկիայում

1. Աղանայի վիլայէթ	280,000
2. Հալէպի (հիւսիսային մասն Այնթար, Ռեբադ, Քիլիս, Մարաշ)	100,000
	380,000

III Ասիական Թիւրքիայի մնացեալ մասում

1. Տրապիզոնի վիլայէթ	120,000
2. Բրուսա	60,000
3. Ջմիւնիա	50,000
4. Անգօրա, Կոնիա, Կաստամունի	120,000
5. Սիրիա, Բէյրութ, Մուսուլ, Բաղդադ, Բասրա	40,000
6. Իզմիրի սանջակ և շրջակայք	65,000
	455,000

IV Եւրոպական Թիւրքիայում

1. Պոլիս և շրջակայք	135,000
2. Ազրիանապօլսի վիլայէթ	50,000
3. Եւրոպակ. Թիւրքիայի միւս մասերում (Սալոնիկ և այլն)	10,000
	195,000

Բնդհանուր համագումար 2,660,000

Ք.

1892 թ. լոյս է տեսնում Ֆրանսիացի Վիտալ Կինչիլի քառահատոր վիճակագրութիւնը. «La Turquie d'Asie par Vital Cuinet, Paris» ըստ այդ հեղինակի հայերի թիւն է

Վիտալի կենցր	Լուսաւորչ.	Կաթոլիկ	Բողոքական	գումար
1. Տրապիզոն	44,100	2,300	800	47,200
2. Էրզրում	120,273	12,022	2,672	133,967
3. Վան	79,000	708	290	80,798
4. Բիթլիս	125,600	3,840	1,950	131,390
5. Խարբերդ	61,983	1,675	6,060	69,718
6. Դիարբէքիր	57,890	10,170	11,069	79,129
Գումար	488,846	30,715	22,841	542,402

Փոքր Ասիա

Կ. Պոլիս, Իզմիր, Բրուսա, և այլն

1. Լուսաւորչականներ	479,118
2. Կաթոլիկներ	36,872
3. Բողոքականներ	52,692
Գումար	568,682

## Սիրիա եւ Պաղեստին

000, 1. Լուսաւորչականներ	23,815
2. Կաթոլիկներ	19,459
000, 3. Բողոքականներ	20,183
000, 000, Գումար	63,457

## Միջագետ

000, 1. Լուսաւորչականներ	3,700
000, 2. Կաթոլիկներ	2,700
000, 3. Բողոքականներ	125
000, 000, Ընդհանուր համագումար ըստ վիճակ կինէի	6,525
000, 000, Լուսաւորչականների թիւն է	995,479
000, 000, Կաթոլիկների	89,746
000, 000, Բողոքականների	95,841
000, 000, Համագումար	1,181,066

Խնկ Ասիսիուս գիտնականը<sup>4)</sup> 1913 թ. ճշտում է այդ թիւը  
և հաջնում 1,800,000:

## Դ.

000, 000, Թրմանեան արքեպիսկոպոսն (Նախկին պատրիարք) իւր էջայոց եկեղեցին» գրքի մէջ հայերի թուի մասին տալիս է հետևեալ վիճակագրութիւնը.

Ասիական թիւրքիայում, Եւրոպական թիւրքիայում 1) Լուսաւորչականներ 1,766,000, 2) Կաթոլիկներ 85,000, 3) Բողոքականներ 41,500. Համագումար=1,892,500:

## Ե.

000, 000, Վեհափառ կաթուղիկոսի 7 յունվարի 1913 թ. Կ. Պօլսի պատրիարքամնից ստացած վիճակագրութիւնից երեսում է հետևեալը.

1. Կարինի վիլայէթում	205,000 հայ
2. Վանի	185,000 »
3. Բիթլիսի կամ Բաղէզի	172,000 »
4. Խարբերդի	168,000 »
5. Դիարբեքիր	100,000 »
6. Սերաստիա (Սիվազ)	218,000 »

Համագումար 1,048,000 հայ

Ար կազմում է ընդհանուր բնակչութեան 38%:

4) Sie «Der Christliche Orient» հանդէսի № 3—4, 1913 թ.

Զ.

Վահմավայլ Տ. Պօղոս Նուրար վաշան Փարիզի Միջազգային  
ժողովում նկրկայացրել է Հայաստանի միմիայն վեց լիլայէթների  
հայ ազգաբնակութեան թիւը 1,018,000 \*).

Թթրասէր պրոֆ. Վանբերին (Deutsche Rundschau, Februar  
1896) հայերի թիւը Տաճկաստանում հաշւում է 1,130,000:

Կինչը իւր (ՂԱՐՄԵՆԻ) գրքում հաշուած է հայերի թիւը  
1,058,000:

Այսպիսով կարելի է ասել, որ Ասիական և Եւրոպական թիւր-  
քիայում հայերի թիւը կարող է լինել մինչև  $2\frac{1}{2}$  միլիան:

Ա. Գ. Ա.

### Պ Բ Ե Ա Ա Ն Ա Լ

Հեռագիրը գումար 7-ի գիշերը վախ-  
ճանուել է ֆրանսիական ազգի ամենաշոյակապ դեմքերից  
մէկը՝ Ֆրանսիս դը Պրեսսանսէն: Նրա հայ ազգին մատու-  
ցած ծառայութիւններն այնքան նշանակալից են, որ մենք  
կարեւոր համարեցինք գէթ երկու խօսքով ընթերցողներին  
ծանօթացնել այդ ազնիւ և վեհ ծերունու կեանքին:

Պրեսսանսէն ծնուել է 1853 թ. սեպտեմբերի 30-ին  
Փարիզում: Նրա ծնողները եղել են կրթուած և հասա-  
րակական գործիչներ: Նա իր ամբողջ կեանքը, իր միտքն  
ու գրիչը կենելուածների եւ տառապող փոքրիկ ժողո-  
վուրդներին է նուիրում: Սարել, զործել եւ մեռնել շա-  
հազործող մարդկութեան, տանջուղ մանր ազգերի համար,  
ահա այն մեծ զաղախարք, որ Դրէյֆուսի դատի բնրաց-  
գում համակեց մրանիսի դը Պրեսսանսէի էութիւնը: Պրե-  
սսանսէի գործունէութեան ամենաքեզուն շրջանը նրա կեան-  
քի վերջին տասնամեակն էր—1902—1912 թ. 1912-ից  
նա Մարդկանց իրաւունքի Պատմական Միութեան անդամ  
է լինուած և շուտով էլ այդ միութեան նախազահ է ըն-

\*.) Տես Արարատ 1914 թիւ Ա. էջ 49: